ձեալ, քանի որ աս հնարքս չէր գըտ-նուած՝ Ճարպը շատ ուշ կը հալէր, ու շատ վառելու նիւթ կը փՃանար. իսկ հիմա աւելի շուտ կը հալի, ու վառելու քիչ նիւթ կ'երթայ. խարխընծի-ները Ճզմելու ալ ժամանակ չկորսուիր։

Ճարպը ջրելու՝ կերպը։—Ալ երի ըսած կերպովս Ճարպը հալեցընելէն ետքը, խիստ պատուական մոմ կը շինուի. բայց թէ անկէ ալ ազնիւ ուզես շինել, պէտք է Ճարպը նորէն ջրես։ Մը 50 լիպրէ հալեցուցած Ճարպ, ու մանը ջարդէ. առ նաև 15 լիպրէ մաքուր ջուր, և մէկ ունկի ու կէս ծծըմբային թթուուտի հետ խառնէ, որով 66 աստիճան ջերմութիւն կը պատՃառի. ետքը ամէնը մէկէն խալկինի մը մէջ լեցուր, ու չափաւոր կրակի մը վրայ դիր։ Երբոր եփ ելլելու վրայ կ'ըլլայ, կը սկսի սաստիկ փրփրիլ. ան միջոցին շերեփով մը փրփուրները վրայէն առ, ու երբեմն երբեմն խառնէ, ու խալկինին մէջի ջուրը շերեփով մը վեր առ՝ նորէն մէջը լեցուր, որպէս զի աւելի դիւրաւ փրփրի. երբոր ալ չփրփրիր՝ կրակը սաստկացուր ինչուան որ սկսի եռալ, ու անանկ կենայ 30 կամ 40 վայրկեան. ան միջոցին նորէն միակերպ խառնէ շերեփով մը, որպէս զի բոլոր նիւթը տակնուվրայ ըլլայ. ու կրակէն վար առնելէդ ետքը Ճարպին մէջի կոշտ ու պինդ մասունքները ջրին տակը իջնան։

Անկէ ետքը Ճարպն ու ջուրը խալկինին մէջէն թափէ ուրիշ մաքուր տաշտի մը մէջ. երբոր Ճարպը քիչ մը պաղի՝ զգուշութեամբ ուրիշ ամանի մէջ դարպէ անիկայ. բայց նայէ որ մէկ բթաչափ թանձրութիւն ջրին երեսը Ճարպ ձգես, որպէս զի չըլլայ թէ Ճարպը բոլորովին առնելով՝ մէջը ջուր ալ խառնուի. որ մոմ շինելէդ ետքը վառելու մեծ արգելք կ'ըլլայ, ու վտանգաւոր է։ Ճարպը աս կերպով զտելէդ ետքը՝ ամենևին մէջը օտար նիւթերու մասունք չմնար. և անկէ շինուած մոմերը կ'ըլլան Ճերմակ, չոր, կարծր, լոյսերնին մաքուր, և քովերնէն ամենևին արցունք չվազեր։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ալ՝ան Մ՝մպուրկ։

Մ՝ՍՒԱՑԻՔ և Մ՝փրիկեցիք իրենց պատմութեանց մէջ շատ օրինակներով կը հաստատեն թէ վագրներն ու առիւծները պզտիկուց որ բռնուին ու աղէկ հոգացուին, կ'ընտանենան, ու իրենց տիրոջը վրայ մեծ սէր կը կապեն. բայց մեծնալէն ետքը իրենց բնական վայրենութիւնը բռնածին պէս՝ ամէն ընտանութիւն կը մոռնան։ Եւրոպացւոց մէջ ալ այսպիսի պատմութիւններ չեն պակսիր։ Միայն Ալ՝ան Մ՝մպուրկ անունով կտրիՃը հիմակուան ատենս յայտնի կը ցուցընէ թէ մարդս բովանդակ ստեղծուածներուն վրայ իրաւունք տէր ու իշխան է։ Կը կարդանք լրագիրներու մէջ, թէ յուլիս ամսուն՝ Մ՝նգղիացւոց Թագուհիին առջևը երկու հատ առիւծի ձագ տարեր է, որ մէյմէկ ընտանի շնիկներու պէս կը քծնին եղեր իրենց տիրոջը. Թագուհին ալ շատ ախորժեր ու հաւներ է այնպիսի նոր տեսարանին։

Ալ՝ան Մ՝մպուրկ տասներկու տարեկան տղայ եղած ատենը սկսեր է ետևէ ըլլալ որ ինչ և իցէ անյաղթելի երևցած բաներուն ալ յաղթէ։ Մ՝ս մտածմունքով գաղտուկ կ'ելլեր տնէն, Մ՝երիկայի անտառները կը պտըտեր, որսորդներու հետ ընկերութիւն կ'ըներ։ Օթը տարի ասանկ պտըտելէն ետքը դարձաւ իր հօրը տունը, տեսաւ որ իր ծնողքը շատ նեղութեան մէջ են. մտածեց որ իր սորված արհեստովը անոնց ալ ապրուստը Ճարէ. Թէպէտ և առաջուց միտքը ստակ վաստըկիլ չէր, հապա միայն զուար-

ձանալ։ Լուստի նորէն անտառները դարձաւ, ամէն վտանգ՝ նեղութիւն ու սոսկալի փորձանքներ աչքը առած՝ գնաց վայրի գազաններուն մէջ մտաւ. ետքը գնաց քաղաքէ քաղաք այլ և այլ գազաններ պտըտցընողի մը յայտնեց իր հնարքներն ու վարպետութիւնները. և խօսք տուաւ, ամենևին չտեսած վագրներուս ու առիւծներուս մէջ յանկարծ կը մտնեմ, ու ինծի բան մը չէն ըներ ըսաւ։ Ուրիշ բերան չհաւատաց մարդը, բայց վերջապէս Ալան Մպուրկին աղաչանքներուն նայելով՝ թողուց որ փորձ մը ընէ։ Ալան Մպուրկ արձակ համարձակ երկու վագրի, մէկ ընձառիւծի ու մէկ առիւծի մը մէջ նետուեցաւ՝ առանց ամենևին տարակուսելու։ Հոն եղած մարդիկը ան գազաններուն զարհուրելի մռնչելէն դողդղալ սկսան, ըսելով թէ անշուշտ կերակուր եղաւ գազաններուն. մէյմ՚ալ տեսնեն որ անիկայ մէջերնին կեցած խաղ կը կանչէ, և գազանները հանդարտ կեցեր մտիկ կ՚ընեն։ Այրբոր մարդիկը ապշած կը հարցընէին իրեն, թէ ատ ինչ հնարք էր որ բանեցուցիր, ինքը ըսաւ անոնց. դուք անոր կը զարմանաք թէ ինչպէս ինծմէ կը վախնան ասոնք, բայց ես կ՚ուզեմ որ իմ հրամաններուս ալ հնազանդին աս գազանները. և կը խոստանամ որ քիչ ատենէն վախճանիս հասնիմ։

Ինչ օրէն ետքը գրեթէ գիշեր ցորեկ առիւծներու, վագրներու ու յովազներու քովէն չցատուեցաւ. և ոչ միայն վրանին տիրեց, հապա նաև սիրելի եղաւ անոնց։ Ալան Մպուրկ չորս տարի կեցաւ անանկ աս գազանային ընկերութեանը մէջ, և այնչափ ժամանակը խիստ կարճ երևցաւ իր աչքին։ Այրբոր հասաւ իր խոստմունքը կատարելու օրը, ու Այոր Այրբք քաղքին բնակիչները հրապարակը ժողվուած կը սպասէին, Ալան Մպուրկ իրեն կատաղի աշակերտներովը դուրս ելաւ։ Տեսնողները վախերնէն կը քստմնէին. ինքը ուրախ զուարթ ու հանգիստ սրտով սկսաւ գազաններուն այլ և այլ շարժմունքներ ու ձևեր ընել տալ երկայն ատեն, ու զամէնքը ապշեցուց։ Խմացուեցաւ թէ աս զարմանալի մարդուն շարժմունքէն՝ կերպէն ու կերպարանքէն կամ նայուածքէն է, որ ան կատաղի գազանները մէյմէկ հեզ ու հանդարտ կենդանիներ կը դառնան։ Ալան Մպուրկ Մերիկայէն եկաւ Ինտրա ու Դաղղիա. և ուր որ պտըտեցաւ՝ զամէնքն ալ զարմացուց, ու շատ ստակ ժողվեց. և ամէն տեղ որչափ որ իր անունը լսեր էին՝ աչքով տեսածնին իրենց լսածէն շատ վեր էր։ Հիմա աս հիանալի մարդը շատ երկիրներ քալելէն ետև նորէն Անգղիա գնացած է, և իրեք չորս տարի է որ հոն է։

ԱՀԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Լոնդոն։

Լոնդոնը Մեքրիկէի գլխաւոր ու անուանի քաղաքներէն մէկն է, ու հարիւրաւոր տարիներէ 'ի վեր օսմանեան տերութեան իշխանութեանը տակն է։ Մանք կարծեցին թէ հին ատենը հռչակաւոր Կարքեդոն կամ Կարթագինէ ըսուած քաղաքը աս ըլլայ. բայց ուրիշներուն կարծիքը աւելի հաւանական է, որ կ՚ըսեն թէ Լոնդոնը հին ատենի Լարսիս ըսուածն է, որ Կարքեդոնացիք պարիսպներով ու բերդերով ամրցուցած էին։ Իսկ հին Կարքեդոնին աւերակները Լոնդոնէն հիւսիսային արևմտեան կողմը կ՚ինան. բայց այնպէս ծածկուեր ու անհետ եղեր են որ հազիւ կը ճանչցուին. որ ատենով հարիւր հազար զինուոր ու իրեք հարիւր փիղ մէկէն կը հանէ եղեր թշնամեաց դէմ, և Միլկար՝ Անիբաղայ հայրը Կարքեդոնին նաւարանէն երկու հազար պատերազմական նաւ ու իրեք-հազար վաճառականի նաւ մէկէն հա-